

Armenian Soccer ինտերնետ կայքը ներկայացնում է «Բանանցի» եւ Հայաստանի երիտասարդական հավաքականի պաշտպան Գագիկ Դադբաշյանի բլից-հարցազրույցը:

Բոլոր թերթերը , ինտերնետ - կայքերը , ամսագրերը կարող են օգտագործել այս նյութը՝ նշելով բնօրինակը – www.armenian-soccer.com: Իրավունք չկա օգտագործելու այս նյութը վաճառքի կամ այլ մարքետինգային նպատակներով:



1.Քանի՞ տարեկանից եք սկսել զբաղվել ֆուտբոլով, ի՞նչ փուլեր ես անցել:

Ֆուտբոլ սկսել եմ խաղալ 12 տարեկանից՝ 2002 թվականին «Բանանցում»: Այնտեղից էլ հրավեր ստացա Մ-18 հավաքական: Այժմ արդեն խաղում եմ Մ-21-ում ու «Բանանցի» կազմում հանդես եմ գալիս Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնությունում:

2. Հետագայում կցանկանայի՞ր շարունակել կարիերադ Հայաստանից դուրս:

Այո,իհարկե:

3. Որո՞նք են նպատակներդ ֆուտբոլում: Նպատակս է՝ դառնալ համաշխարհային

աստղ:

4. Քեզ ֆուտբոլում հաջողակ համարո՞ւմ ես:

Այո,ես ինձ հաջողակ համարում եմ:

5. Ու՞մ ես քեզ պարտական համարում նրա համար,որ դու այսօր ֆուտբոլում ես:

Իմ ֆուտբոլային կարիերայի համար պարտական եմ ընտանիքիս:

6. Ըստ քեզ՝ ազգային հավաքականը այսօրվա Գագիկ Դադբաշյանի համար հասանելի՞ բարձունք է:

Ժամանակը ցույց կտա:

7. Երիտասարդական հավաքականի կազմում այս տարի արդեն մասնակցել ես Մոնտենեգրոյի հետ խաղին: Ի՞նչ կարծիքի ես թե՛ քո խաղի ու թե թիմի շանսերի մասին:

Այս տարի մեր հավաքականը մեծ շանսեր ունի ու կարող է հաջողությունների հասնել: Ինչ վերաբերում է իմ խաղին՝ ես միանշանակ ավելի լավ կարող էի խաղալ:

8.«Բանանցի» դպրոցը փաստացի «աչքիդ առաջ» է՝ տեսնո՞ւմ ես արդյոք նոր աճող սերնդի պատանիների մեջ նրանց, ովքեր արդեն վաղը կկարողանան ձեզ փոխարինել Մ-21-ում:

«Բանանցում» միշտ էլ արժանի փոխարինողներ կան:

9. Կա՞ այնպիսի թիմ, որտեղ կցանկանայիր խաղալ:
Կուզեի «Չելսիում» խաղալ:



10. Կա՞ այնպիսի ֆուտբոլիստ , ում կցանկանայիր նմանվել:

Շատ եմ ցանկանում նմանվել Ռոբերտո Կառլոսին, Դանի Ալվեսին կամ էլ Մարսելոյին:

11. Իսկ բացի ֆուտբոլից, ուրիշ ի՞նչ մարզաձևեր են քեզ հետաքրքրում:

Ինձ գրավում են նաև մեծ թենիսն ու լողը:

12. Ինչպի՞սի հանգիստ ես նախընտրում:

Ակտիվ:

13. Հաջողություններ ենք մատրթում քո ֆուտբոլային կարիերայում:
Շնորհակալություն:

Հարցազրույցը պատրաստեց Հայկուհի Առաքելյանը հասունկ Armenian Soccer կայքի համար:

Լուսանկարները տրամադրված են Գ. Դադրաշյանի կողմից:

©2011 Armenian Soccer